Արձանագրություն N 2

«ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի

ք.Ճամբարակ,Գ.Նժդեհի 125

սկիզբ «05» «05» 2026թ.
ժամը 17:30
ավարտ «08» « 05 » 2026թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Ստեփանյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Վան Գաբրիելյան/ԳԱ/, Համլետ Արամյան /ԳԱ/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Մարկոսյան/ԳՀ/

1.Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

(Արտակ Ստեփանյան)

Ընդունել ի գիտություն,որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2026 թվականի մայիսի 05-ին, ժամը 17:00-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Տեղեկություններ «ԳՄՃՀ-ԳՀԱՇՁԲ-26/05» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցների մասին

(Արտակ Ստեփանյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել 2/երկու / մասնակից/ներ/

հ/հ	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործուն	ք.Երևան,Ավան Դուրյան 34-39,էլ.փոստ՝ edaraplast@gmail.com,հեռ. +077228008 ք.Երևան,Գ.Նժդեհի 46,էլ.փոստ՝ opier.group@gmail.com,հեռ. +096057755
2	«Վիռա» ՍՊԸ և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիում	ք.Ճամբարակ, Պ.Սևակի փող 42 տուն,1301,էլ.փոստ՝ arm13arm@gmail.com,հեռ. +37498088847 ՀՀ Գեղարքունիքի մարզ, 1301,ք. Ճամբարակ,Տ.Մեծի շենք 6 բն.7,էլ.փոստ՝ shinarar2023@mail.ru,հեռ. +37493840494

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի մասին

(Արտակ Ստեփանյան)

3.1 Գնանշման հարցման մրցույթի գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկ/ները/.

հ/հ	Մասնակցի անվանումը	Աշխատանքի անվանումը	Աշխատանքի նախահաշվային գինը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ	Առաջարկված գնի՝ ԱԱՀ	Առաջարկված գինը՝ ԱԱՀ-ով	Հայտի ապահովման առկայություն
1	«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործուն	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Գետիկ բնակավայրի հանդիսությունների սրահի վերանորոգման աշխատանքներ	30 417 087	22 400 000	4 480 000	26 880 000	Առկա է,համապատասխանում է
2	«Վիռա» ՍՊԸ և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիում			22 497 000	4 499 400	26 996 400	Առկա է,համապատասխանում է
3	«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործուն	ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Վահան բնակավայրի նախկին գրադարանի շենքի վերանորոգման աշխատանքներ	57 591 106	42 900 000	8 580 000	51 480 000	Առկա է,համապատասխանում է
4	«Վիռա» ՍՊԸ և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիում			42 697 500	8 539 500	51 237 000	Առկա է,համապատասխանում է

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Տպալսեր Ընթացակարգը էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու Հրավերով սահմանված վավերապայմաններին լինելու մասին:

(Արտակ Ստեփանյան)

Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են և համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին /պահանջներին/,բացառությամբ՝

«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործունեության կողմից ներկայացված հայտում՝

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է,որ Ձեր ներկայացված հայտում՝

- 29.04.2026թ.-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրում նշված չէ, ***որ գործընկերն է ներդնելու*** *որպես ավանդ քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխատանքների)* ***2-րդ դասի էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) ներդիրով (ներդիրի ծածկագիրը՝ 05)», 1-ին դասի «բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ » ներդիրով (ներդիրի ծածկագիրը՝ 04)*** *ոլորտի լիցենզիայի ներդիրներ, մասնագիտական փորձառություն, ֆինանսական միջոցներ,հայտի ապահովման գումար, տեխնիկական միջոցներ, սույն պայմանագրի 1.1 կետում նշված գործունեության իրականացման համար:*
- Նշված չէ կողմերի համատեղ *որոշմամբ ներդրված ավանդների արժեքը տոկոսային հարաբերակցությամբ:*
- *Նշված չէ Կոնսորցիումով հանդես գալու և ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում՝ կողմերից մեկի պարտավորությունների չկատարումը (կամ կողմերից մեկի մասնակցության դադարեցումը) տարածվում է նաև մյուս կողմի վրա համապարտ պատասխանատվության ձևով, հետևաբար կոնսորցիումի պայմանագրի լուծումը նշանակում է մասնակիցներից յուրաքանչյուրի պարտավորությունների չկատարում (Գնումների գործընթացի կարգավորման կարգի 33 կետի 3–րդ ենթակետ, Հրավերի 2.6 կետի 2–րդ ենթակետ):*

«Վիռա» ՍՊԸ և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիումի կողմից ներկայացված հայտում՝

Գնահատող հանձնաժողովն արձանագրել է,որ Ձեր ներկայացված հայտում՝

- 27.04.2026թ.-ին կնքված համատեղ գործունեության պայմանագրում ԳՈՐԾԸՆԿԵՐ 1-ի տնօրենի անունը և ազգանունը սխալ է գրված:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. Նիստը կասեցնել:
2. Ծանուցել ***«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործունեության և «Վիռա» ՍՊԸ-ն և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիումին*** շտկել արձանագրված անհամապատասխանությունները :
3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը և հրավերի 8.9 կետը,09.04.2026թ.-ին գնահատող հանձնաժողովը նիստը կասեցվում է 1 /մեկ/ աշխատանքային օրով՝ կոնսորցիումին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 07.05.2026թ ժամը 18:00-ն, հանձնաժողովին ներկայացնել վերոնշյալ փաստաթղթերը:

08.05.2026 թվականին,ժամը 09:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները:

- ***«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համատ.գործունեության և* «Վիռա» ՍՊԸ-ն և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիումը** սահմանված ժամկետում իրականացրել են ծանուցմամբ ներկայացված անհամապատասխանությաների շտկումը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են **բավարար:**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին:

(Արտակ Ստեփանյան)

5.1 Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները Ընթացակարգի **1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել *«Էդառա պլաստ» ՍՊԸ և « Օ ՖԻԵՌ ԳՐՈՒՊ» ՍՊԸ համապ.գործունեությանը, և 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել* «Վիռա» ՍՊԸ-ն և « Շինտեխնիկա» ՍՊԸ կոնսորցիումին**:

5.2 Հաշվի առնելով այն հանգամանքը,որ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել մեկից ավել մասնակիցներ,ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները՝ հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին՝ անգործության ժամկետ սահմանելով 10 օրացուցային օր: Անգործության ավարտ՝ **17.05.2026թ.:**

5.3 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

5.4 Ընթացակարգի ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ՝հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3 դեմ 0:

6. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները:

Նախագահ՝ _____ **Ա. Ստեփանյան/ԳԱՊ/**

Անդամներ՝ _____ **Վ. Գաբրիելյան /ԳԱ/**

_____ **Հ. Արամյան /ԳԱ/**

Քարտուղար՝ _____ **Լ. Մարկոսյան/ԳՀ/**